ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
<<ԱՐԹԻԿԻ ՊԵՏԱԿԱՆ
ՔՈԼԵՋ>> ՊՈԱԿ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ,
НАУКИ, КУЛЬТУРЫ И СПОРТА
АРТИКСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ
КОЛЛЕДЖ
REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION, SCIENCE,
CULTURE AND SPORT
ARTIK STATE COLLEGE

ՀՀ Շիրակի մարզ Ք. Արթիկ, Տոնականյան 33, Հեռ./Тел./Tel.: /0244/ 5-27-57, /E- mail / golej@mail.ru,
РА Ширакская область г. Артик, ул. Тонаканяна 33, Artik ,Tonakanyan 33

104 28 ՕԳՈՍՏՈՍ 2025Թ

ՀՀ ԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐ

ՏԻԿԻՆ Ժ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆԻՆ

Հարգարժան տիկին Անդրեասյան

Տեղեկացնում ենք Ձեզ, որ <<Արթիկի պետական քոլեջ>> ՊՈԱԿ-ում անցկացվելու է մրցույթ համաձայն ՀՀ ԿԳՄՍ նախարարության թափուր տեղի համար մրցույթի օրինակելի կարգի:

2025-2026 ուսումնական տարվա դասաբաշխման արդյունքում առաջացել են հետևյալ առարկաների և մոդուլների թափուր դասաժամեր

✔Ֆիզիկա 400ժամ,
✔Ինֆորմատիկա 72ժամ,
✔Կենսաբանություն 170ժամ,
✔Տնտեսագիտության հիմունքներ 106ժամ,
✔Քիմիա 250ժամ
✔0114 «Ֆիզիկական կուլտուրա և սպորտ» մասնագիտության- «Ընտրված մարզաձևի ուսուցման մարզման հիմունքներ» մոդուլը,մասնագիտական մոդուլներ և ֆիզկուլտուրա առարկան -1.5դրույք,
✔«Փոխադրումների կազմակերպումը և կառավարումը տրանսպորտում» մասնագիտության- «Միանական տրանսպորտային համակարգեր» մոդուլը, մասնագիտական մոդուլներ-1.5 դրույք:

Վերոնշյալ թափուր տեղի համար կարող է մասնակցել այն անձը, ով համապատասխանում է՝ հանրակրթական առարկաների դասավանդման դեպքում <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ի առաջին մասի պահանջներին:

Մասնագիտական մոդուլների դեպքում՝ տվյալ մասնագիտական պետական կրթական չափորոշչով սահմանված պահանջներին:

Մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերն ընդունվում են մրցույթի հայտարարության հրապարակման օրվանից սկսած 10 աշխատանքային օրվա ընթացքում: Հարցազրույցին հրավիրվող անձը հարցազրույցի օրը պետք է ներկայացնի հետևյալ

բնօրինակ փաստաթղթերը՝

Բարձրագույն մասնագիտական կրթության որակավորում կամ տվյալ մասնագիտական զբաղվածության բնագավառում աշխատանքային գործունեության փորձ:

Պահանջվող փաստաթղթերի ցանկը՝
▪դիմում,
▪կրթության մասին հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) (բնօրինակը և պատճենը),
▪անձնագիր (բնօրինակը և պատճենը),
▪աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում),
▪ինքնակենսագրություն/Ձև 4/,
▪մեկ լուսանկար 3x4 չափի,

Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ (բնօրինակը և պատճենը),

Այլ պետության քաղաքացիները ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ:

Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական աստիճան, կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Փաստաթղթերն ընդունվում են 28.08.2025թ.-ից մինչև 11.09.2025թ ամեն օր ժամը 09:00 –ից մինչև 15:00:

Մրցույթի անցկացման օրը՝ 12.09.2025թ., ժամը՝ 13:00, վայրը՝ ք.Արթիկ Տոնականյան 33

Հարցերի դեպքում կարող եք այցելել քոլեջ կամ զանգահարել հետևյալ հեռախոսահամարով՝ 0244-5-27-57:

Տնօրեն՝ Ա. Ղուկիջոյան